Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր՝ 1.2-1/ համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

16.03.2015

Հայտատու՝ Գետահովիտի գյուղապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի14-րդ հոդված

16.03.2015թ.
Հայտատու՝ Տավուշի մարզի Գետահովիտի գյուղապետարան
<< Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդված
ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ Գետահովիտի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնի համար
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ / ծածկագիր 1.2-1/
Նշված պաշտոնն զբաղեցնելու համար պահնջվում է՝
ա) բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան (կոչում) կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.
բ) ունի <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>> և <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
դ) տիրապետում է ռուսերենին (ազատ) և մեկ այլ օտար (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվի:
Դիմող ՀՀ քաղաքացիները համայնքային ծառայության թափուր պաշտոնի մրցույթին

մասնակցելու համար պետք է անձամբ համապատասխան գյուղապետարան ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
1. Դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս):
2. Կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը, (պատճենները):
3. Արական սեռի անձինք ներկայացնում են զինգրքույկի կամ կցագրման վկայականի պատճենը:
4. Աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում):
5. Երկու լուսանկար՝ 3x4 չափսի:
6. Անձնագրի պատճենը:
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-ից, մինչև 18:00-ն՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:
Մրցույթը կկայանա 2015թ. ապրիլի 16-ին, ժամը 11:00-ին: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է մարտի 31-ը:
Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, գյուղ Գետահովիտ1փ. 19:
Հեռ.՝ +374-263-4-09-88
Էլ. փոստ՝ tavush.getahovit@mta.gov.am

Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ ,գյուղ Գետահովիտ

Հեռ..՝ +374 263 40988

Էլ. փոստ՝ getahovit.tavush@mta.gov.am

Աշխատանքի վերաբերյալ հայտարարություններ